

## ՀԱՆՈՒՆ ԱՍՏՈՈ

### ՓՈՒԽԼՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇՍԳԻՐ

Իրանի Իսլամական Հանրապետության Գիլան նահանգի և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի միջև համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզը և Իրանի Իսլամական Հանրապետության Գիլան նահանգը պայմանավորվածություններ ձեռք բերեցին հետևյալի վերաբերյալ.

1. Կողմերը համաձայնեցին գյուղատնտեսության ոլորտի և գյուղատնտեսական արտադրանքների կարիքները ապահովելու նպատակով մարզային կազմակերպությունների միջոցով աջակցել քիմիական պարարտանյութ, դիզ վառելիք, թունաքիմիկատներ և անհրաժեշտ ապրանքներ ձեռք բերելու ուղղությամբ:

2. Կողմերը համաձայնեցին Արարատի մարզում ջրային կենդանիների բուծման, ձկան և մանր ծովախեցգետնի բուծման ավազաններ ստեղծելու, շերամաբուծության ոլորտում համագործակցելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ Արարատի մարզի և Գիլան նահանգի միջև:

3. Կողմերը անհրաժեշտ համագործակցություն կցուցաբերեն Արարատի մարզում հանքերի, անասնաբուծության, հանքային ջրերի և այլ ոլորտներում համատեղ արտադրամասեր հիմնելու և գործարկելու ուղղությամբ:

4. Կողմերը երկկողմ համագործակցությունը առավել արդյունավետ դարձնելու նպատակով կաջակցեն Արարատ – Գիլան համատեղ առևտրի պալատ ստեղծելու գործընթացին:

5. Արարատի մարզի բրնձի և թեյի կարիքները գործարանային գներով ապահովելու նպատակով հայկական կողմը անհրաժեշտ համաձայնեցումներ ձեռք բերելու համար իր պահանջարկը կներկայացնի իրանական կողմին:

6. Ոչ ակոհոլային գազավորված քաղցրահամ ըմպելիքների, հանքային գազավորված և ոչ գազավորված, խմելու մանկական և սպորտային ջրերի, ինչպես նաև պտղային և բանջարեղենային պահածոների, մուրաբաների, մարինադների, տոմատի մածուկի, չորացած մրգերի և բանջարեղենի կարքերը ապահովելու նպատակով իրանական կողմը անհրաժեշտ համաձայնեցումներ ձեռք բերելու համար իր պահանջները կներկայացնի հայկական կողմին:

7. Բնական քարերի սալիկների և քարից պատրաստված այլ արտադրատեսակների, անասնաբուծության, թռչնաբուծության, ձկնաբուծության բնագավառներում օգտագործվող համակցված կերերի կարիքները ապահովելու նպատակով իրանական կողմը անհրաժեշտ համաձայնեցումներ ձեռք բերելու համար իր պահանջարկը կներկայացնի հայկական կողմին:

8. Կողմերը Արարատի մարզի և Գիլան նահանգի միջև զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով կներդնեն ջանքեր մարզերի զբոսաշրջության գործակալություններին միմյանց ներկայացնելու և նրանց միջև համագործակցությունը խրախուսելու ուղղությամբ:

9. Կողմերը կներդնեն ջանքեր Արարատի մարզում և Գիլան նահանգում ցուցահանդեսներ, մշակութային և արվեստի օրեր կազմակերպելու և ցուցահանդեսների ու մշակութային և արվեստի միջոցառումներին մասնակցելու նպատակով փոխադարձ հրավերներ հղելու ուղղությամբ:

Այս փոխըմբռնման հուշագիրը ստորագրվել է 2016 թվականի դեկտեմբերի 21-ին, համապատասխանաբար արեգակնային 1395 թվականի դեյ ամսվա 1-ին., Երևան քաղաքում, երկու օրինակից հայերեն պարսկերեն լեզուներով, որոնք հավասարազոր են:

ՍՈՒՀԱՍԵՂ ԱԼԻ ԱՄՋԱՅԻ  
ԻՐԶ ԳԻԼԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ

*Մանուկ  
Բեհլու*

ՌՈՒԲԻԿ ԱՐԲՈՒՄԱՅԱՆ  
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՍԱՐՁՊԵՏ

*Արարատ*